

Գործակցություն

Հայաստան-Ճապոնիա

Հունիսի 12-15-ը առաջին անգամ պաշտոնական այցով Հայաստանում էր ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության (JICA) նախագահ Շինիչի Կիտաոկան:

Նրան ընդունել է ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը և նշել, որ հայ-ճապոնական հարաբերությունները հաջողությամբ զարգանում են արդեն 25 տարի, դրանց նպաստել է 2010-ին Տոկիոյում ՀՀ դեսպանության և 2015-ին Երևանում ճապոնիայի դեսպանության բացումը:

Տես՝ էջ 2



N 23 (671)
16-22.06 2017



ՀՀ ԱՄՏԱԿԱՐԳ ԻՐԱԿԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
MINISTRY OF EMERGENCY SITUATIONS OF RA
МИНИСТЕРСТВО ПО ЧРЕЗВЫЧАЙНЫМ СИТУАЦИЯМ РА

ՀՀ ԱՄՏԱԿԱՐԳ ԻՐԱԿԻՃԱԿՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԸ

911

Արտակարգ իրավիճակ

Արտադրություն

Կապանում Եվրամիության դրամաշնորհալից ծրագրով պլաստիկ իրերի վերամշակմամբ նոր արտադրություն կհիմնվի: Դեռևս 2013-2014 թվականներին սկսել են իրականացնել ծրագիր՝ աղբը տարանջատելու համար: 2014-ից արդեն Կապանում կենցաղային աղբից պլաստիկը տարանջատվում է, մամլ-

ՆՈՐ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԵՐԴՐՈՒՄ

վում և պահեստավորվում: «Սկզբում փոքր-ինչ դժվար էր այդ մշակույթը ներմուծելը: Քաղաքացիները պետք է հասկանան աղբի տարանջատման կարևորությունը: Հուրախություն մեզ, բնակիչները շատ արագ արձագանքեցին, և կարճ ժամանակ անց արդյունքներն արդեն տեսանելի են», - «Արմենպրեսին» ասել է հա-

մայնքապետ Աշոտ Հայրապետյանը: Նա նշել է, որ նախատեսված է ձեռք բերել մամլիչներ և տրանսպորտային միջոցներ: Մամլիչները կհատկացվեն Վայոց ձորի և Սյունիքի համայնքներին: Այնտեղ կուտակված պլաստիկ տարաները կմամլվեն և կտեղափոխվեն Կապան:

Կարևոր

ՀԱԿԱԿԱՐԿՏԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԳՍ



էջ 3

ԿՐԹԱՀԱՍԱԼԻՐԻ ԱՍԵՆԱՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԸ



էջ 4

ՆՈՒՅՆ ՃԱՆԱԳԱՐՉԸ ԿԱՆՑՆԵՒ ՆՈՐԻՑ



էջ 4

«ASALA-Ն ՆԵՐՍԻՑ»



էջ 6



Դեռի քեզ

ԼՈՒՍԱԿԱՆԿԱՐԻՑ ԴՈՒՐՄ

Հեռվում սահմանն է, Հին Տիգրանակերտի ստորոտում՝ ձիերի վարք: Թվում է՝ լուսանկարից դուրս՝ դեպի Քեզ, այրուծին է կանգնած՝ հայացքը Արցախի սահմանին: Անծայրածիր հորիզոնում կարծես երևում է դողանքների ճախրանքը: Առաջնագիծը հորիզոնն է՝ այնտեղ կանգնած կապույտ հոգու աղոթանքով մեր գինվորը՝ ամենայն թափով նոր հորիզոն բանալու գիտակցությամբ: Լուսանկարի հեղինակը Արցախի Տիգրանակերտը հազարամյա հաստ հողաշերտից նորից մեզ, լույս աշխարհին ընծայած հնագետ պրոֆեսոր Համլետ Պետրոսյանն է: Նրա համար հորիզոնը վերը նկարագրված պատկերն ու իմաստն ունի: Նրա համար Հայրենիքը հորիզոնի սահման չէ, այլ ընդհանուր: Ու շատերիս համար... Ու արդեն քանի՞ տարի բացվում է Տիգրանակերտը պեղումներով, որպես հորիզոնի պահպան անառիկ կառույց՝ բլուրն ի վար փռված սպիտակափայլ սուր: Ու որքան

բացվում է Տիգրան Մեծի սմբոցը, այնքան հորիզոնում ավելի գուռ են հնչում դողանքները: Մենք փորձում ենք աշխարհին պարտադրել մեր ճշմարտությունը: Աշխարհից խլել մեզանից գողացված մեր հին պատմությունը: Ցարական ժամանակներում եվրոպական գիտնականների մեծ խումբ ժամանեց Հայաստան ուսումնասիրությունների: Տեսածից զարմացան ու իրար մեջ քչփչացին մոտավորապես սա. «Եթե հայերն իմանային, թե ինչն էր ունեն իրենց երկրում»:

19-20-րդ դարի ֆրանսիացի մտածող Ֆրանսուա Բլուան գիտեր ավելին, երբ գրում էր. «Գիտե՞ս, ինչ է հայ ժողովուրդը: Ժողովուրդ է, որն ունի մարդկության ամենահին պատմությունը»: Սա օտարների վերաբերմունքն է:

Սեզանում կան «մտավորական» կոչումով մարդիկ, որոնք մեղանջում են հայկական ծագմամբ ցանկացած պատմական ճշմարտության դեմ, նրանց համար ճշմար-

տության սահմանը օտարներն են: Եթե ասում է օտարը, ուրեմն անբնական է ասվածը: Իսկ երբ ասում է հայը, նույնիսկ ապացուցվածը, ազգային սնապարծություն է: Օտարամոլներին Բլուայի խոսքը, կարծում են, բավարար է: Թե ոչ, ավելացնեն նաև Հենրիխ Շլիմանին. «Եվրոպայի դժբախտությունն է, որ նա որպես քաղաքակրթության հիմք ընդունեց Հունաստանը և ոչ թե Հայաստանը»:

Մենք դուրս ենք եկել նոր ճանապարհ: Հնագետի բրիչով փորվում ենք պատմության անցքերը, վերադառնում անցյալին, հնին, քննում, վերաբնութայնում գտնելու համար մեր պատմական ԵՄ-ը: Շատերը դա իրականությունից փախուստ են համարում: Բայց այդպես չէ: Նորոյա մեր ճանապարհի փնտրտուք է դա: Փորձում ենք պարզել, թե որտեղի՞ց ենք գալիս, որպեսզի հստակեցնենք մեր դեպի ուր գնալը՝ վերջնականապես:

Իսկ ո՞ր ենք ձգտում, մեր սահմանը ո՞րն է, ո՞ր հորիզոնում:

Հիշեմ «Նյու Յորք թայմսի» լրագրողի հայտնի խոսքը, որպեսզի հստակ պատկերացվի Հայ տեսակի կարողության սահմանը, որն ամենայն թափով հորիզոններ է կտրում. «Ինձ թվում է, - ասում է նա, - որ հայերը Մասիսը ստեղծել են Աստծո արարչագործությունից առաջ: Աստված հազիվ թե այնպիսի տեսություններ, ինչպիսին ունեն քանքարներով օժտված հայերը»: Եվ մեկ օտարի խոսք մեր մասին օտարամոլների համար, որի տակ Հայոց այրուծի ու սլացքը կա:

Համոզվեցի՞ք, որ օտարները լավ են ճանաչում Հայի տեսակը, քան մենք՝ ինքներս մեզ:

Մտածենք այս մասին...

Մտածենք, որովհետև, եթե երկրին էլ տեր չեն հեծյալները, ձիերը դառնում են լծկան... Վերագտնենք մեր Տիգրանակերտները նոր հորիզոններում:

Լուսանկարից դուրս՝ դեպի Քեզ, այրուծին է կանգնած:

Գագիկ ԵՂՅԱՆ



Երկրաշարժի գրանցում

Հունիսի 15-ին, տեղական ժամանակով ժամը 13:34-ին, ՀՀ ԱԻՆ Սեյսմիկ պաշտպանության ծառայության սեյսմոլոգիական ցանցի կողմից գրանցվել է երկրաշարժ՝ Չարենցավան քաղաքից 9 կմ հյուսիս-արևելք, օջախի 10 կմ խորությամբ, 2,6 մագնիտուդով երկրաշարժ: Ստորգետնյա ցնցման ուժգնությունը էպիկենտրոնում կազմել է 3 բալ: Երկրաշարժը զգացվել է Չարենցավան քաղաքում՝ 3 բալ ուժգնությամբ:

ՀԱՅ-ՃԱՊՈՆԱԿԱՆ «ԱՐՏԱԿԱՐԳ» ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Կողմերը ղատրաստ են խորացնել և զարգացնել առկա կաղերը

Շինիչի Կիտական ՀՀ ԱԻ նախարար Դավիթ Տոնոյանի ուղեկցությամբ այցելել է Երևան քաղաքի փրկարար ուժերի վարչության թիվ 8 հրշեջ-փրկարարական ջոկատ՝ ծանոթացել ջոկատի տեխնիկական զինվածությանը և հագեցվածությանը, անձնակազմի աշխատանքային պայմաններին և կանչերի արձագանքման առանձնահատկություններին: Այս ՀՓՁ-ում շահագործվում է ճապոնիայի կառավարության նվիրած հրշեջ-փրկարարական 28 մեքենայից 4-ը: Շինիչի Կիտական ասել է, որ հայ հրշեջ-փրկարարները ճապոնական մեքենաները շահագործում են արդյունավետ և հավուր պատշաճ:



Հունիսի 13-ին ՀՀ ԱԻ նախարար Դավիթ Տոնոյանի, Հայաստանում ճապոնիայի արտակարգ և լիազոր դեսպան Եյջի Տագուչի ուղեկցությամբ Շինիչի Կիտական այցելեց Լոռու մարզի Սպիտակ քաղաք՝ 1988-ի դեկտեմբերի 7-ի Սպիտակի երկրաշարժի և 2011-ի մարտի 11-ի Հոնսյու կղզում երկրաշարժի գոհերի հիշատակի խաչքարերին ծաղիկներ խոնարհելու նպատակով:

Ճանաչում, և հիմա հայ փրկարարներն են պատրաստ՝ օգնության հասնելու այլ երկրներին: Հաշվի առնելով ճապոնիայի մեծ փորձը և ձեռքբերումներն աղետների ռիսկի կառավարման, արտակարգ իրավիճակների արձագանքման ոլորտներում, ինչպես նաև կարևորելով ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության հետ գործակցության արդյունքում Հայաստանի ակնառու հաջողությունները՝ այսօր մենք հավաստում ենք, որ պատրաստ ենք ընդլայնելու այդ համագործակցությունը»,- Սպիտակում հայտարարեց ԱԻ նախարարը:

Վերապատրաստում է անցել Սպիտակի հրշեջ-փրկարարական ջոկատի հրամանատար Սերոբ Գաբրիելյանը, եղել 2011-ի մարտի 11-ի երկրաշարժի գոտում և վերադարձին Սպիտակում ճապոնիայի երկրաշարժի գոհերի հիշատակի խաչքար տեղադրել: «Սա աղետների կանխարգելման ոլորտում ճապոնիայի հետ համագործակցության երախտագիտության արտահայտության նշան է: Այստեղ՝ ճապոնիայից հազարավոր կիլոմետրեր հեռու, հարգում են ճապոնիայի երկրաշարժի գոհերի հիշատակը: Աղթում են, որ համագործակցությունը խորանա և ամրապնդվի»,- խաչքարերին ծաղիկներ խոնարհելիս ասաց Շինիչի Կիտական:

ցույց տա, որ տնտեսական համագործակցությունը չի նշանակում միայն ֆինանսներ, այլ նաև փոխադարձ ըմբռնում, հասկացողություն, երախտագիտություն միմյանց նկատմամբ, ինչը կարևոր նախապայման է առկա համագործակցությունն էլ ավելի զարգացնելու համար»:

Աղետների ռիսկի կառավարման, արտակարգ իրավիճակների արձագանքման ոլորտներում Հայաստանն ու ճապոնիան չեն սահմանափակվում երկկողմ կապերով և միջազգային ծրագրեր են նախաձեռնում: 2005 և 2015 թվականներին ճապոնիայում անցկացվել են աղետների ռիսկի նվազեցման համաշխարհային համաժողովներ, 2015 և 2016 թվականներին Հայաստանում անցկացվել են «Հանրային իրազեկումը՝ որպես աղետների ռիսկի նվազեցման և կայուն զարգացման անկյունաքար» միջազգային համաժողովներ:

Արամ ԶԱՔԱՐՅԱՆ
Լուս. Հարություն ԲԱԲԱՅԱՆի
Սպիտակ-Երևան

Վտանգավոր երևույթների կանխատեսումը, կանխարգելումը և դրանց հետևանքների վերացումը պետության անվտանգության ապահովման հարթությունում կարևոր սոցիալ-տնտեսական խնդիր է, իսկ երկրաշարժում առավել ծանր հետևանքների բերող վտանգավոր երևույթ է բնական աղետ: Հայաստանի Հանրապետության տարածքը ենթակա է երկրաշարժի վտանգի: Հայաստանի գրեթե ամբողջ տարածքը գտնվում է սեյսմակտիվ (երկրաշարժառակտիվ) գոտում: Երկրաշարժերը կարող են առաջացնել նաև տեխնոգեն վթարներ և նրանցից ածանցվող բնապահպանական աղետներ՝ հանգեցնելով մարդու բնակչության միջավայրի որակական փոփոխությունների: Հետևաբար, Հայաստանում բնակչության պաշտպանության կայունության բարձրացման հիմնախնդրում էական նշանակություն ունի սեյսմիկ վտանգի կանխատեսումը, սեյսմիկ ռիսկի գնահատումը և նվազեցումը:

ՍԵՅՍՄԻԿ ՌԻՍԿԻ ՆՎԱԳԵՑՈՒՄ

Երկրաշարժի հետևանքների վրա ազդեցություն թողնող անկառավարելի գործոններ



ժերի առավել հավանական օջախներ-էպիկենտրոններ են համարվում
ա. Գառնի, երկրաշարժի առավելագույն ուժգնությունը՝ 10-11 բալ,
բ. Ջանգեզուր, երկրաշարժի առավելագույն ուժգնությունը՝ 8-9 բալ,
գ. Սպիտակ երկրաշարժի առավելագույն ուժգնությունը՝ 9-10 բալ, դ. Փարաքար երկրաշարժի առավելագույն ուժգնությունը՝ 7 բալ: Սրանցից բացի, երկրաշարժի հայտնի օջախներ են նաև Նոյեմբերյանը, Արարատը, Դվինը, Մարտունին, Վայոց ձորը:
Համադրելով հանրապետությունում երկրաշարժերի հավանական օջախների տեղաբաշխվածությունը, շինությունների սեյսմակայունությունը, վտանգավոր օբյեկտների և բնակավայրերի բախշվածու-

թական, գիտական, ինժեներատեխնիկական, կազմակերպական և այլն) ուղղված ուժեղ երկրաշարժից մարդկային, նյութական և այլ հնարավոր կորուստների նվազեցմանը: Սեյսմիկ ռիսկը նվազեցնելու առաջնահերթ պայման է երկրաշարժի հետևանքների վրա էական ազդեցություն թողնող գործոնների կայունության բարձրացումը՝ դիմակայունության բարձրացման նպատակով: Երկրաշարժի հետևանքների վրա էական ազդեցություն կարող են թողնել մի շարք գործոններ՝ կառավարելի և անկառավարելի: Անկառավարելի գործոններն են. տարվա եղանակը, օրվա ժամը, երկրաշարժի հավանական օջախների տեղաբաշխվածությունը, բնահողի առանձնահատկությունները, մակերևութապատկերը: Օրինակ, Գառնիի օջախում հնարավոր ուժեղ երկրաշարժի դեպքում բնակչության պաշտպանության կազմակերպման պլանը մշակելիս, կարելի է բնաբաշխել Գառնիի երկրաշարժի հնարավոր ազդեցությունը Փարաքարի օջախի վրա:
Անփոփելիվ՝ նկատենք, որ սեյսմիկ ռիսկի նվազեցման հիմնախնդրում կարևոր է ամեն ինչ, նաև՝ երկրաշարժի հետևանքով առաջացած երկրորդային գործոնների ազդեցության նվազեցումը, ինչին հասնելու հիմնական ձևերից են ինչպես վտանգավոր օբյեկտների արդյունավետ տեղաբաշխումը սեյսմավտանգ տարածքներում, այնպես էլ վտանգավոր օբյեկտների սեյսմակայունության բարձրացումը:

Հրապարակումը պատրաստվել է Սարգիս Մանուկյանի և Գագիկ Ճաղարյանի «Երկրաշարժի հետևանքների վրա էական ազդեցություն թողնող անկառավարելի գործոններ» գեկույցի հիման վրա: Զեկույցը ներկայացվել է ՀՀ ԱԻՆ ժողովում կառավարման պետական ակադեմիայի 25-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովին:

Վերջին տասնամյակներում Կովկասում և Հայկական լեռնաշխարհում նկատվում է երկրակեղևի սեյսմիկ ակտիվացում, որն ուղեկցվում է ավերիչ երկրաշարժերով: Թուրքիա՝ 1983, 1992, 1997, 1999, 2011 թվականների երկրաշարժեր, Իրան՝ 1990, 1992, 1997, 1998, 1999 թթ., Վրաստանի՝ 1992 թ. և այլն: Կանխատեսումները վկայում են, որ վերոհիշյալ տարածքներում ցանկացած պահի հնարավոր է ավերիչ երկրաշարժ:
Համաձայն լիազոր մարմնի տվյալների՝ մեր երկրում երկրաշար-

թյունը, բնակչության խտությունը, բազմահարկ շենքերի առկայությունը, բնակչության պաշտպանվածության մակարդակը՝ սեյսմիկ ռիսկի տեսակետից իրավիճակը խնդրահարույց է:
Երկրաշարժի հետևանքների վրա էական ազդեցություն թողնող գործոնների ճիշտ կառավարումը էական նվազեցնում է երկրաշարժի հետևանքները: 1988-ի Սպիտակի երկրաշարժի ժամանակ աղետին զոհ գնաց 3 բնակիչից 1-ը, 1995-ի ճապոնիայի Կոբե քաղաքում նույն ուժգնության երկրաշարժից զոհվեց 300 բնակիչից 1-ը:
Սեյսմիկ ռիսկի նվազեցումը պետության և հասարակության երկարաժամկետ համալիր և բազմաբնույթ գործողություններ են (վարչական, իրավական, սոցիալական, տնտեսական, ուսուցողական, կր-



Հանձնարարական

Արմավիրի մարզում հունիսի 12-ի կարկտահարության հարցը կառավարության ուշադրության կենտրոնում է: Կառավարության նիստում վարչապետ Կարեն Կարապետյանը գյուղատնտեսության և տարածքային կառավարման և զարգացման նախարարներին, Արմավիրի մարզպետին հանձնարարել է եռօրյա ժամկետում ճշտել վնասի չափերն ու կառավարությանը ներկայացնել առաջարկություններ:

ՀԱԿԱԿԱՐԿՏԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՍ

Հունիսի 12-ին հանրապետության տարածքում քամու, կայծակի և ամպրոպի ուղեկցությամբ հորդառատ անձրևի և ուժեղ կարկուտի հետևանքով ջրով ողողվել էին երևանի մի շարք փողոցներ, տեղ-տեղ կաթվածահար էր եղել երթևեկությունը, ջրի մեծ հոսքը ծառերից պոկված ճյուղերն ու տերևները լցրել էր գետնանցումները, խցանել սելավատարները: Մեքենաներն ու երթուղայինները գրեթե կիսով չափ հայտնվել էին ջրի մեջ, ինչի հետևանքով ճանապարհներին առաջացել էին խցանումներ: «Հիդրոմետ» ծառայության տվյալներով այդ օրը մայրաքաղաքում տեղացել է 13-14 մմ անձրև, որը կազմում է երևանում հունիս ամսվա տեղումների միջին ամսական քանակի 50 տոկոսը:

Բաղրամյանի տարածաշրջանի Արզիմա համայնքին: Հաշվարկների համաձայն նշված համայնքներում հիմնականում վնասվել է բերքի 40-90 տոկոսը, իսկ առանձին տնտեսություններ մինչև 100 տոկոսի վնաս են կրել: Տավուշի մարզի սահմանները Ոսկեպար գյուղը նույնպես անմասն չի մնացել կարկուտի պատճառած վնասներից: Ոսկեպարցիները պատմում են, որ ձյի մեծությամբ կարկուտի զարկերից գրեթե ոչինչ չի փրկվել:



Գեղարքունիքի մարզի Այրթ գյուղում, որտեղ հակակարկուտային կայաններ չկան, կարկուտի հետևանքով վնասվել են 110 հա ցորենի և 20 հա գարու ցանկատարածքներ: Լոռու, Կոտայքի, Վայոց ձորի, Արարատի, Արագածոտնի մարզերում կարկտահարության հետևանքով գյուղըլորտին լուրջ վնասներ չեն հասցվել, թեթև վնասներ է կրել նաև Շիրակի մարզը: Ինչպես տեղեկացնում են «Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայությունից», հունիսի 12-ին հակակարկուտային կայանները ինտենսիվ աշխատել են, ինչի արդյունքում մի շարք մարզերում Լոռիում, Կոտայքում, Վայոց ձորում, Արագածոտնում, Շիրակում հնարավոր է եղել խուսափել վնասներից, իսկ տարածաշրջանների որոշ համայնքներում գրանցված վնասը չնչին տոկոս է կազմել: Հակակարկուտային համազարկերի արդյունքում Արագածոտնի մարզի հարակից համայնքները, Արմավիրի մյուս բնակավայրերը փրկվել են կարկտահարությունից:

Յիսայան, Արաքս (Վաղարշապատ) համայնքների տարածքներում տեղակայված թվով 60 հակակարկուտային կայաններով ներգործության են ենթարկվել ինչպես առաջին, այնպես էլ առավել վտանգավոր երրորդ կատեգորիայի կարկտավտանգ ամպեր, որոնց ուղղությամբ արձակվել է 18 հազար 170 կրակոց: Հակակարկուտային կայաններն ինտենսիվ աշխատել են նաև Արագածոտնի մարզում: Արագածոտնում, Նոր Եղեցի, Կոչ, Ուջան, Աղծք, Ազարակ, Ոսկեհատ, Ոսկեվազ, Փարսի, Ղազարավան, Արտաշավան, Սաղմոսավան, Օհանավան, Կարբի, Արագածոտն, Աշտարակ, Սասունիկ համայնքների տարածքներում տեղակայված թվով 51 հակակարկուտային կայաններով ներգործության են ենթարկվել առաջին կատեգորիայի կարկտավտանգ 2, երկրորդ կատեգորիայի կարկտավտանգ 1 և երրորդ կատեգորիայի կարկտավտանգ 1 ամպ, կատարվել 32 հազար 636 կրակոց: Կոտայքի մարզում նույնպես հակակարկուտային պաշտպանության միջոցառումներ են իրականացվել: Նոր Երզնկա, Եղվարդ, Մրգաշեն, Քանաքեռավան, Նոր Գեղի, Նոր Արտամետ, Արգել համայնքների տարածքներում տեղակայված թվով 13 հակա-

կարկուտային կայաններով ներգործության են ենթարկվել առաջին, երկրորդ և երրորդ կատեգորիայի կարկտավտանգ մեկական ամպ, կատարվել 6840 կրակոց: Հակակարկուտային կայաններն աշխատել են նաև Վայոց ձորում, Լոռու մարզում, ինչպես նաև Շիրակի մարզի Արզիմ, Ախուրյան, Բասեն, Բայանդուր, Երազգավորս, Գետք, Արևիկ, Ազատան, Մեղրաշեն, Շիրակավան, Փանիկ համայնքներում և այլն:

Հիշեցնենք, որ ներկայումս ողջ երկրի տարածքում գործում է 496 հակակարկուտային կայան, որի շնորհիվ հնարավոր է պաշտպանել հանրապետության մշակվող հողատարածքների մոտ 10 տոկոսը միայն: Կիրառվող այս մեթոդի արդյունավետությունը 50 տոկոս է կազմում:

Մեր թերթի նախորդ համարներում տեղեկացրել ենք, որ հողատարածքների լիարժեք պաշտպանության նպատակով ԱՄՆ-ը հակակարկուտային պաշտպանության առավել արդյունավետ համակարգի՝ հրթիռային կայանների տեղադրման ուղղությամբ ակտիվ աշխատանքներ է իրականացնում, մրցույթն արդեն հայտարարվել է, ընթացքի մեջ են կազմակերպական աշխատանքները: Հրթիռային կայանն ի վիճակի կլինի ավելի քան 200 անգամ մեծ տարածք պաշտպանել մոտ 18 հազար հա, ի տարբերություն ներկայիս գազագեներատորային եղանակով գործածվող կայանի, իսկ արդյունավետությունը 50 տոկոսի փոխարեն կկազմի 80-90 տոկոս, գուցե և ավելի: ■

Սերի ՍՈՂՈՍՈՆՅԱՆ

Հ.Գ. Անցած յոթ օրում հակակարկուտային կայաններից Շիրակի, Լոռու, Արմավիրի, Արագածոտնի, Արարատի, Տավուշի, Կոտայքի եւ Վայոց ձորի մարզերի մոտ 100 համայնքի տարածքներում ներգործության են ենթարկվել տարբեր կարգի կարկտավտանգավոր 26 ամպ, արձակվել է 90 000 կրակոց:

ԴԻՎԱՆԱԳԵՏՆԵՐԸ՝ ԳԱՌՆԻԻ ԵՐԿՐԱՑԻԳԻԿԱԿԱՆ ԴԻՏԱՐԱՆՈՒՄ

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար Դավիթ Տոնոյանի հրավերով և ուղեկցությամբ հունիսի 9-ին ՀՀ ԱԻՆ «Սեյսմիկ պաշտպանության արևմտյան ծառայության» Գառնիի երկրաֆիզիկական դիտարան ԳԵԴ, էին այցելել Հայաստանում աշխատող դիվանագետներ և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ: Ֆրանսիայի և Չեխիայի դեսպանները, Շվեդիայի, Իրանի, Շվեյցարիայի, ճապոնիայի, Ռուսաստանի, Վրաստանի դեսպանությունների, Կարմիր խաչի միջազգային կոմիտեի պատվիրակության ներկայացուցիչներ: «Սեյսմիկ պաշտպանության ծառայությունն առաջնային նշանակություն ունի Հայաստանում և, առհասարակ, տարածաշրջանում աղետների ռիսկի նվազեցման գործընթացում: Այդ ուղղությամբ տարվող աշխատանքների առաջին քայլը սպառնացող վտանգների վաղ ազդարարումն է:



Սեյսմիկ պաշտպանության համակարգի հզորացումն ու արդիակառուցումը նաև մեր միջազգային գործընկերների օժանդակությամբ մեծապես կնպաստի մեր երկրի և տարածաշրջանի դիմակայունության բարձրացմանը», - դիվանագետներին տեղեկացրել է ԱԻ նախարարը:

Հյուրերը շրջել են ԳԵԴ-ում, եղել սեյսմաերկրաքիմիական անալիտիկ լաբորատորիայում, սեյսմիկ վտանգի գնահատման և բնակչության հետ տարվող աշխատանքների կենտրոններում և վերջում ասել, որ գոհ են և տպավորված: ՀՀ ԱԻՆ «Սեյսմիկ պաշտպանության ծառայություն» գործակալու-

թյան պետ Հրաչյա Պետրոսյանը «Սեյսմիկ պաշտպանությունը որպես ազգային անվտանգության կարևոր բաղադրիչ» գեկույցով ներկայացրել է այս ոլորտում մեր արածը, արվողը և անելիքը: Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայությունը ստեղծվել է 1991 թվականին, իսկ 1998 թվականին «Վտանգի նվազեցման և աղետների կանխման գործում ակնառու ներդրման համար» ճանաչվել էվրոպայում առաջինը և աշխարհում երկրորդը: Այժմ սեյսմիկ մոնիթորինգի ազգային բազմապարամետրային դիտացանցն ունի 153 կայան, այդ թվում Գառնիի երկրաֆիզիկական դիտարանը, որոնց օգնությամբ դիտարկվում են երկրաֆիզիկական, սեյսմիկ, երկրադինամիկական, երկրաքիմիական, գեոդեզիական, դեֆորմացիոն, իոնոսֆերային, կենսաբանական և այլ պարամետրեր: ՄՊԱԾ-ում պարբերաբար վերլուծվում է սեյսմիկ ռեժիմը և գնահատվում է ընթացիկ սեյսմիկ վտանգը: Արդեն պատրաստ են 25 բնակավայրի սեյսմիկ ռիսկի քարտեզները, երևան, Գյումրի, Վանաձոր, Ստեփանավան, Արթիկ, Սպիտակ, Տաշիր, Մարալիկ, Նոյեմբերյան, Դիլիջան, Իջևան, Բերդ, Ախուրյան, Ազատան, Աշոցք, Օձուն, Ալավերդի, Թումանյան, Ախթալա, Դաղարձին, Սառնաղբյուր, Դոմաշեն, Ամսիա, Բերդավան և Գյուլգաբարակ: (GIS) տեխնոլոգիաներով ստեղծվում են ռիսկի գնահատման թվային տվյալների բազաներ: Մշակվել են դպրոցների սեյսմիկ խոցելիության գնահատման չափորոշիչներ: Կազմակերպվել են սեյսմիկ պաշտպանության վարքականոցների ուսուցում ու վարժանքներ: Դիտացանցի զարգացման և կատարելագործման հարցում Հայաստանը համագործակցում է Ամերիկայի Միացյալ Նահանգների, Ռուսաստանի, Ֆրանսիայի, ճապոնիայի, Չեխիայի, Շվեյցարիայի, Ատոմային էներգիայի միջազգային գործակալության, ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի, Ասիական զարգացման բանկի և այլ երկրների ու կազմակերպությունների հետ: ■



Կրթական դարտեզ՝ արվարձանում

Դպրոցը և մանկապարտեզը պետք է լինեն իրենց բնակավայրի հետ մեկ ամբողջական ներառական տարածք: Մենք չենք հարցնում դու քո երեխային բերում ես մեր դպրոց, թե՛ ոչ: Իմ ու քո չկա. ազատ է բոլորի համար: Մարզվում են, ֆուտբոլ են խաղում դաշտում, հեծանիվ են քշում, զբոսնում են: Սա է «Կրթական պարտեզ՝ արվարձանում» մոդելը՝ մեկ միասնական խնամված տարածք բնակչի համար՝ իր անցուղիներով և հանգստի անկյուններով:

Կանաչապատ լանջեր

Մայրաքաղաքի Հարավարևմտյան զանգվածում կողք կողքի երկու զուգահեռ իրականություն կա: Մեկը ժառանգել ենք խորհրդային ժամանակներից: Մեր աչքն արդեն 40 տարի վարժվել է բակերը միմյանցից բաժանող հենապատերին, ճաղապատ մանկապարտեզներին ու խաղահրապարակներին, շենքերի բակերում ցանկապատով մասնատված հողակտորներին: Այս պատկերներին հակադրվում է մյուս իրականությունը՝ «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի ստեղծած բաց համայնքը՝ յոթ մասնաշենքերի շրջակայքն այլևս ազատ է արգելապատնեշներից:

Կրթահամալիրի տնօրեն Աշոտ Բլեյանի հետ շրջում ենք դպրոցների մերձակայքով: Նա ցույց է տալիս գրունտն կամ ավագնե ճանապարհները, հեծանվողիները, նորատունկ այգիները, կանաչապատ փոքրիկ լանջերը, որոնք գոյացել են հենապատերը քանդելու արդյունքում: Ամեն քայլի հեծանվորդներ ու մանկասայլակով ծնողներ են զբոսնում: Հասնում ենք Գեղարվեստի դպրոցին: «Տեսեք, այստեղ հսկա անհաղթահարելի պատնեշ էր, որ բաժանում էր P-1 թաղամասի արևմտյան և արևելյան հատվածները: Մենք քանդեցինք պատնեշը, և հիմա բնակիչներն անարգել շրջում են տարածքում»,- ասում է կրթահամալիրի տնօրենը: Բնակավայրը պետք է առավելագույնս հարմար, անվտանգ ու ներառական լինի բնակչի համար: Իհարկե, այսպիսի միջավայրը խնամք է պահանջում: Դրա համար են մարդիկ ձգտում ասֆալտապատել, պատնեշել, մեկուսացնել տարածքները:

ԲԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՔՐԻԿ ՄՈՂԵԼԸ

Կրթահամալիրի ամենամարդասիրական ներդրումը



Դպրոցից դպրոց անցնելիս երբեմն հատում ենք հարևան «վտանգավոր գոտիները», ինչպես Աշոտ Բլեյանն է բնորոշում, բարձր, նեղ աստիճաններն ու կիսաբանդ մեղիկ ճանապարհները՝ առանձնացված «մահաբեր պատերով»: Հենապատերն իսկապես լավ վիճակում չեն: Հողմնահարումներն իրենցն արել են. քարերի մի մասն ընկել է, մի մասն էլ շարժվում է, կարող են թափվել: Սեբաստացիները տարիներ շարունակ հենք այսպիսի «անհիմաստ, անտեղի, վտանգավոր» պատերից են ազատել տարածքները՝ վերածելով դրանք զմրուխտն լանջերի:

Ապաստարաններ

Կրթօջախի ամենամարդասիրական ներդրումը, թերևս, կառուցված ապաստարաններն են:

Յոթ շենքերի գետնափոր տիպային նկուղները հիմնանորոգվել են, ազատվել հողե ծածկույթից և ունեն ապակեպատ ճակատներ ու մուտքեր, որոնց դիմաց խնամված, կանաչ բլուրներ են: Ապաստարաններն ապահովված են նվազագույն կենցաղային պայմաններով և արտակարգ իրավիճակներում կարող են ծամեր և օրեր շարունակ պատսպարել թաղամասի բազմաթիվ բնակիչների:

Աշոտ Բլեյանը պատրաստ է արտակարգ իրավիճակների նախարարության հետ համագործակցությամբ անցկացնել նաև փորձնական վարժանքներ, որոնց ժամանակ և՛ բնակիչները ձեռք կբերեն հմտություններ, և՛ պարզ կդառնա, թե բանի մարդ կարող է պատսպարվել ապաստարաններում: «Կարող ենք պայմանագիր կնքել նախարարության հետ, նույն մա-



խարարությունը պահանջներ դնի, և եթե ունի միջոցներ՝ նպատակային հատկացումներ անի, որպեսզի մենք էլ ոգևորվենք»,- ֆինանսավորման մասին հարցին ի պատասխան ասում է Աշոտ Բլեյանը: Այս շենքերը պետական են և տրված են մեզ՝ նպատակային օգտագործման համար: Կառավարությունն է սեփականատերը և պարտավոր է որպես հիմնադիր ֆինանսական հատկացումներ կատարել: Հերթի են դրել հիմնանորոգման ծրագրերի համար, բայց որքա՞ն սպասենք և ինչի՞ն սպասենք: Ի վերջո, միջավայր է փոխվում, որը ծառայում է բնակչին: Բնակավայրը տարբեր պատճառներով ամենատարբեր ֆունկցիաներ չի ունեցել, հիմա արդեն ունի:

Ռանի ընթերցասրահներից: «Բաց դպրոցի գաղափարը բաց հասարակության պատվերն է, բաց նաև ներքին սահմանների առումով»,- ասում է կրթօջախի տնօրենը: Դպրոցը և մանկապարտեզը պետք է լինեն իրենց բնակավայրի հետ մեկ ամբողջական ներառական տարածք:

Մենք չենք հարցնում դու քո երեխային բերում ես մեր դպրոց, թե՛ ոչ: Իմ ու քո չկա. ազատ է բոլորի համար: Մարզվում են, ֆուտբոլ են խաղում դաշտում, հեծանիվ են քշում, զբոսնում են:

Սա է «Կրթական պարտեզ՝ արվարձանում» մոդելը՝ մեկ միասնական խնամված տարածք բնակչի համար՝ իր անցուղիներով և հանգստի անկյուններով:

Ժաննա ՍԱՐԳՅԱՆ

Փ/ծ ավագ, օդակի հրամանատար Դերենիկ Թադևոսյանը Հայաստանի ամենահայտնի առողջարանային քաղաք Ջերմուկի բնակիչ է: Վայոց ձորի այդ չքնաղ բնաշխարհից է սկսել իր շենք-փրկարարի իր ճանապարհը դեռ հեռավոր 1984-ին, երբ, խորհրդային բանակից զորացրվելուց հետո, ծառայության է անցել Ջերմուկի իր շենք մասում: Իսկ 2006-ին տեղափոխվել է Արարատի մարզի Մասիսի իր շենք-փրկարարական ջոկատ (ՀՓՏ), դարձել Մասիսի բնակիչ: «Հրդեհաշիջման ժամանակ առաջինը ես եմ մտնում գործողության մեջ և կազմակերպում աշխատանքը: 33 տարվա իմ փորձն ինձ թույլ է տալիս արագ կողմնորոշվել և կրակը մեկուսացնել ու մարել»,- ասում է փորձառու իր շենք-փրկարարը:

ՆՈՒՅՆ ՃԱՆԱՊԱՐՅՈՒ ԿԱՆՑՆԵՒ ՆՈՐԻՑ

Հանգստի մեկնող վաստակաշատ իր շենք-փրկարարը



Ասում է բոլորն էլ դժվար դեպքեր են եղել, շատ անգամ դրանց կանխարգելիչն ու հետևանքների վերացնողն ինքն է եղել, ի՞նչ պատմի իր շենքի ու վթարի մասին: Սակայն, երբ հետադարձ հայացքով նայում է իր անցած ճանապարհին, վաստակաշատ մարդու մեղմ ոգևորությամբ նշում է. «Ինձ լավ են գոյում, որ օրինակելի գործ եմ արել, մարդկանց եմ օգնել, փրկել եմ գույք ու ունեցվածք, նաև կյանքեր: Ոչ միայն չեմ փոշմանել, այլև, եթե հնարավորություն տրվեր ինձ՝ նույն ճանապարհը կանցնեի նորից: Երկտ է, թոշակի եմ գնում, բայց որքան էլ տարիներ անցնեն, ես միշտ

հոգով ու սրտով փրկարար եմ մնալու»,- ասում է օդակի հրամանատարը:

Ծառայությունն ավարտող իր շենք-փրկարարը նշում է, թե շատ կուզենար երեք տղաներից զոհն մեկն իր գործը շարունակել, բայց նրանց ուղին այլ կերպ է ընթացել և միշտ չէ, որ կյանքի պահանջն ու իր ցանկությունը համընկնում են. «Փոքր տղան՝ Գուրգեն, ազատ ոճի ըմբշամարտիկ է եղել, 2012-ին հռչակվել է Հայաստանի չեմպիոն, ընդգրկվել է նաև Հայաստանի ըմբշամարտի ազգային հավաքականում, իսկ բանակում ծառայել է կայույտ բերետավորների հատուկ

ջոկատում: Բանակից խնդիրներով եկավ, վիրահատվեց, նորից սկսեց պարապել, բայց շարունակել չկարողացավ»:

Հրձեց-փրկարարն ունի նաև տոհմական ծառանգություն ստացած մասնագիտություն, մեդվապահ է. «Հայրս էլ է եղել մեդվապահ, պապս էլ, հիմա էլ ես եմ շարունակում նրանց «քաղցր» գործը: Ջերմուկում խնամում եմ 50 մեդվի փեթակ, և հաճելի է, և աշխատանք ունեն հանգստյան օրերին, իմ եկամտի մի մասն էլ ապահովում է մեդվաբուծությունը»: Նաև հանգիստ ու անխառն կենցաղով նշում է, որ երեք տղաներից մեկին Ջերմուկում է տնով ապահովել, երկրորդին՝ Մասիսում, և մտածում է երրորդի մասին որպես հայրական պարտք, որ պետք է մինչև վերջ մարի:

Այսպիսին է Դերենիկ Թադևոսյանը և որպես փորձառու իր շենք-փրկարար, որ 33-ամյա ճանապարհ է անցել, և որպես բարեխիղճ ու սրտացավ ծնող, և առհասարակ, բարիք ստեղծող անհատ հասարակական կյանքում:

Փ/ծ ավագն ու օդակի հրամանատարն իր երկարամյա ծառայության ընթացքում արժանացել է պատվոգրերի և ԱԻ նախարարի, և Մասիսի քաղաքապետի կողմից: Ասում է, որ չի ձգտել պարգևների ու ավելի բարձր դիրքի, միշտ գե-

րադասել է աշխատանքը և դրա օգտակար ու շոշափելի արդյունքը, ինչից միշտ իրեն բավարարված է զգացել: Իսկ Արարատի մարզային փրկարարական ծառայության Մասիսի ՀՓՏ հրամանատար, փ/ծ մայրո Բագրատ Դանիելյանն իր փորձառու ծառայողին բնորոշում է որպես զրեթե անփոխարինելի, համեմայն դեպս, կրտսերների շարքում հավասարը չունեցող իր շենք-փրկարարի բարձր զննատեսչով նրա անցած մարտական ուղին. «Բազմիցս ականատես եմ եղել Դերենիկ Թադևոսյանի աշխատանքին, թե ինչպես է կրում ու կատարում ծառայությունը և ինչ բարեխիղճությամբ է պահում կարգ ու կանոնը, նաև պարտականությունները՝ պատշաճ ու ճիշտ ժամանակին իրականացնելով: Այսօր ափսոսանքով եմ կենսաթոշակի ծանապարհում մեր օդակի հրամանատարին ու փ/ծ ավագին, փորձառու իր շենք-փրկարարին: Միայն դրական հատկանիշներով կարող եմ բնորոշել մեր վետերանին, որն իսկապես աշխատանքով ու փորձով բարձր է իր կրտսեր գործընկերներից և ջանքով ու եռանդով չի զիջում երիտասարդներին»:

Ֆելիքս ԵՂԻԱՋԱՐՅԱՆ



Օգնություն ամեն ժամ

Երիտասարդ փրկարարին դժվարությունները չեն կարող կանգնեցնել, նա պատրաստ է օրվա ցանկացած ժամին, հերթապահելիս, թե տանը՝ հարկ եղած դեպքում թույլ առաջ շտապել գործընկերներին օգնության: Ասում է՝ կյանքից շատ բան չի ուզում, դժբախտ դեպքերը քիչ լինեն, փրկված մարդկանց թիվն էլ անհամեմատ մեծ:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՓՐԿԱՐԱՐԸ, ՈՐԸ ԵՆՈՒՏՈՎ ՋԱՅՐ Է ԴԱՌՆԱԼՈՒ

Դժվարություններն անխուսափելի են, ամուսն ենք առավելագույնը



«Փրկարարի համար որևէ նշանակություն չունի, թե դեպքի վայրում ում կյանքն է փրկում: Լինի հայ, արաբ, թուրք, թե պարսիկ... մենք աշխատում ենք բոլորին հավասար ձեռք մեկնելու սկզբունքով՝ առանց խտրականություն դնելու»,- Սիսիանի հրշեջ-փրկարարական ջոկատի փրկարար, փ/ծ ենթասպա Արտակ Մովսիսյանի խոսքը փրկարարական գործի առանձնահատկության մասին է: Արմատներով Սիսիանի տարածաշրջանի Ույծ գյուղից է: Փրկարար եղբոր վառ օրինակն աչքի տակ ունենալով, երբևէ չի մտածել, որ ինքն էլ մի օր փրկարարի համազգեստ կրելու որոշում կկայացնի: Ամեն ինչ որոշվեց մեկ ակնթարթում, պատահականորեն: Պատմում է, որ 2006-ին դարձավ նոր էր ավարտել, երբ ձեռքն ընկավ «Արտակարգ թերթում» ԱԻՆ ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի ընդունելության վերաբերյալ հայտարարությունը: Երկար չտատանվեց, շուտով նա էլ հարյուրավոր ուսանողների պես ԱԻՆ-ի համակարգ մուտք գործելու առաջին վճռորոշ քայլն արեց: «Ընդունվեցի ակադեմիայի «Հրդեհային պաշտպանություն և ճարտարագիտություն» ֆակուլտետը, մեկ տարի անց գորակոչվեցի բանակ: Մասնակցել եմ մեծ գորավարժանքների, պարաշյուտատեղանտային ստորաբաժանման անդամներից եմ եղել, ունեմ մի քանի թռիչք: Բանակից վերադառնալուց հետո ընդունվեցի ԱԻՆ-ի հատուկ փրկարարական ջոկատ, որտեղ աշխատեցի 3,5 տարի, զուգահեռ էլ ավարտեցի ակադեմիան»,- ասում է փ/ծ ենթասպան և խոստովանում, որ ակադեմիայում մասնագիտանալուց և հատուկ փրկարարական ջոկատում աշխատելու տարիներից սկսած սիրեց ընտրած մասնագիտությունը: 2013-ից տեղափոխվել է Սիսիան և գործի անցել տեղի հրշեջ-փրկարարական ջոկատում: Անկեղծանում է՝ փրկարար աշխատելու տարիները շատ բան են տվել իրեն, վերացրել բնավորության վատ կողմերը, ամենակարևորը՝ իր մեջ հաստատված անտարբերությունը փոխարինվեց դիմացինի հանդեպ սրտացավուն

թյանը: «Սկսեցի այլ տեսանկյունից արժևորել մարդու կյանքը, ինչի շնորհիվ դեպքերի արձագանքելիս անմնացորդ միջոցներ եմ գործի: Կարծում եմ, շատ ճիշտ ընտրություն եմ արել, կյանքը փոխհատուցում է իմ ամեն կատարած գործի համար, ես ու ընտանիքս մեր կաշվի վրա զգում ենք դա»,- նկատում է 28-ամյա փրկարարը, որն իր փրկարարական առաքելությունն իրականացնելիս չի խնայում իրեն, մասնավոր, երբ մտարին դրված է երեխայի կյանքի հարցը: Աշխատանքային տարիներին Երևանում և Սիսիանում բազմապիսի դեպքերի է արձագանքել՝ կապիկ իջեցրել ծառից, շան ձագ հանել անիվի միջից, կենդանուն ջոկատում շահել-պահել, հրդեհներ մարել, դաժան վթարներում փրկարարական գործին մասնակից եղել...
Հիշողության մեջ դրոշմված հարյուրավոր դեպքերից առանձնացնում է 2012-ին Երևանում 12-ամյա Իննային փրկելու ծանր, բայց բարեհաջող ավարտ ունեցած դեպքը: «2012-ն էր, թե 2013-ը, ահազանգ էինք ստացել, որ 12-ամյա աղջկա ձեռքը մնացել է ինքնաշեն մատաղացի մեջ: Դեպքի վայրում իմացանք, որ շտապօգնության մեքենան աղջնակին տեղափոխել է հիվանդանոց և մտադիր են անդամատել երեխա-

թյանը դիմում է խիստ անհրաժեշտության դեպքում և շատ վայրերի բնակիչների պես չի անհանգստացնում շանը կամ կատվին այս կամ այլ վայր հեռացնելու խնդրանքով:
Փրկարարական գործում դժվարություններն անխուսափելի են, հատկապես, երբ թույլ առաջ տեղ հասնելուց շատ բան է կախված: «Մենք լեռնային պայմաններում ենք աշխատում, դեպքի մեկնելու ժամանակ միշտ սար ենք բարձրանում և որոշ դժվարություններ են լինում, երբ «Ձիլ-130», «Ձիլ-131» ծանր հրշեջ մեքենաներով փորձում են հնարավորինս արագ տեղ հասնել: Բայց անկախ ամեն ինչից, ամուսն ենք առավելագույնը, ինչ կախված է մեզանից...»,- հավելում է Արտակը:
Ամենաբարդ ու ամենաերկարատև փրկարարական աշխատանքն իր գործունեության տարիներին եղել է 2015-ի հունվարի 3-ին ծնաբքի հետևանքով 3 օր շարունակ Սիսիան-Գորիս ավտոճանապարհին 5-6 կմ երկարությամբ ձգվող խցանումների միջից մարդկանց ու մեքենաներ դուրս բերելը: «Վրանային հենակետեր դեռ չէին գործում այդ ժամանակ: Սարսափելի վիճակ էր ճանապարհին, մեքենաներից բարձր ձնաշերտեր էին

գոյացել, ծյուն մաքրող մեքենաները չէին հասցնում մաքրել ճանապարհը, քամին սարերից ծյունն անդադար լցնում էր ու փակում այն: Մեքենաների մեջ Կապանի, Մեղրու, Գորիսի տարածաշրջաններից, Դարաբաղից, Երևանից ուղևորներ կային մեծ ու փոքր: Սիսիանի ու Գորիսի ԳՓՁ-ի տղաներով ուղևորներին հանել ու այդ պայմաններում 4 անգամ տեղափոխել ենք մոտակա հյուրանոցներ, այլ կացարաններ: Օգնության էին հասել նաև զինվորականները: Միևնույն ժամանակ Գորիսի «Սողո գյուղ» կոչվող տեղանքում մարդ էր կորել, նաև նրա որոնողափրկարարական աշխատանքներին էինք մասնակցում»,- պատմում է Արտակ Մովսիսյանը և հիշում, թե ինչպես են սառնամանիքի ու բքի հետ կռիվ տալով հաղթահարել անհաղթահարելի թվացող իրավիճակը: Իսկ իրենց ուժ տվողը խցանումների մեջ օգնության սպասող ուղևորների վստահությունն էր փրկարարների հանդեպ:
Երիտասարդ փրկարարին դժվարությունները չեն կարող կանգնեցնել, նա պատրաստ է օրվա ցանկացած ժամին, հերթապահելիս, թե տանը՝ հարկ եղած դեպքում թույլ առաջ շտապել գործընկերներին օգնության: Ասում է՝ կյանքից շատ բան չի ուզում, դժբախտ դեպքերը քիչ լինեն, փրկված մարդկանց թիվն էլ անհամեմատ մեծ:

Մերի ՍՈՂՈՍՈՆՅԱՆ

ՕՊՏԻՄԱԼԱՅՎՈՒՄ Է ՍԵՅՄԻԿ ՊԱՇՏՊԱԼՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ ԱԻՆ առաջարկով կառավարությունը որոշել է միավորել «Սեյսմիկ պաշտպանության հյուսիսային ծառայություն» և «Սեյսմիկ պաշտպանության հարավային ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունները և դրանք միացնել «Սեյսմիկ պաշտպանության արևմտյան ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը: Որոշման համաձայն միացյալ կազմակերպությունը կկոչվի «Սեյսմիկ պաշտպանության տարածքային ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպություն: Փոփոխություններ կլինեն նաև Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի «Սեյսմիկ պաշտպանության ծառայություն» գործակալությունում: Միավորումների և փոփո-



խությունների արդյունքում «Սեյսմիկ պաշտպանության ծառայություն» գործակալությունում կկրճատվի 10, «Սեյսմիկ պաշտպանության արևմտյան ծառայությունում»՝ 16, «Սեյսմիկ պաշտպանության հյուսիսային ծառայությունում»՝ 14, «Սեյսմիկ պաշտպանության հարավային

ծառայությունում»՝ 10 հաստիք: Ընդամենը 50 հաստիք: Սեյսմիկ պաշտպանության մարմինների բարեփոխումների արդյունքում տարեկան կտնտեսվի 76,546 մլն դրամ:
Այս ամենի նպատակն է հստակեցնել գործառույթներն ու խնդիրները, միմյանց կրկնող ստորաբաժանումները միավորել, առավել արդյունավետ օգտագործել ռեսուրսները, հնարավորինս կենտրոնացնել, պարզեցնել և հստակեցնել պետական ոչ առևտրային կազմակերպությունների ֆինանսական ու նյութատեխնիկական միջոցների ստացումը, բաշխումը, նվազեցնել ծախսը, ապահովել պետական ոչ առևտրային կազմակերպությունների առավել արդյունավետ գործունեություն, նպատակների առավել արդյունավետ իրականացում: ■

Մայիսի խոշոր հրդեհները

2017-ի մայիսին ՀՀ ԱԻՆ պետական հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչությունում հաշվառվել է 88 հրդեհ՝ 44 մլն դրամի նյութական վնասով: Զոհվել է 1, վնասվածք ստացել՝ 5 մարդ:

- Խոշոր հրդեհներից են՝**
1. 8 մայիսի, Շիրակի մարզ, գյուղ Քարաբերդ, «ՎԱԶ-2114» ավտոմեքենա: Նյութական վնասը՝ 2 650 000 դրամ: Հրդեհի առաջացման պատճառը պարզաբանվում է:
 2. 16 մայիսի, քաղաք Երևան, Համբարձումյան 97, «Լեքսուս-RX 350» ավտոմեքենա: Նյութական վնասը՝ 6 285 086 դրամ: Հրդեհի առաջացման պատճառը՝ էլեկտրահաղորդալարերի կարճ միացում:
 3. 24 մայիսի, Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, «Լիսան» ավտոմեքենա: Նյութական վնասը՝ 13 000 000 դրամ: Հրդեհի առաջացման պատճառը՝ էլեկտրահաղորդալարերի կարճ միացում: ■



4. 27 մայիսի, Լոռու մարզ, քաղաք Ախթալա, Արմյան 7 տնակ: Նյութական վնասը՝ 3 000 000 դրամ: Հրդեհի առաջացման պատճառը՝ էլեկտրատեխնիկական բնույթի:
5. 29 մայիսի, Արարատի մարզ, գյուղ Դարբնիկ, Անդրանիկի 4, բնակարան 46: Նյութական վնասը՝ 2 170 000 դրամ: Հրդեհի առաջացման պատճառը պարզաբանվում է: ■

Պետական հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչություն



Պայքարի ճանադարի

Մինչև 1970-ականների կեսերը աշխարհը ոչ միայն չգիտեր Հայոց ցեղասպանության մասին, այլև չգիտեր՝ առհասարակ ինչ է Հայաստանը: Նույնիսկ Գուռնարանի մեծ լուսավոր, հանրաճանաչ լրագրողը, որն ուներ 600-700-միլիոնանոց իսպանախոս լսարան, խոստովանել է, որ մինչև հայերի տեղադրած ռուբրիկ պատուհասվելն ինքը Հայաստանի մասին կցկտուր տեղեկություն է ունեցել:

«ASALA-Ն ՆԵՐՍԻՑ»

Մենք աղերսելու փոխարեն դահաճեցեցինք

Զարեցի անվան գրականության և արվեստի թանգարանի տնօրեն Կարո Վարդանյանի «Պայքարներ թուրքիայում և... ոչ միայն» իրապատում վեպը ներկայացնում է Հայաստանի Ազատագրության Հայ Գաղտնի Բանակի (ASALA) չբացահայտված անդամներից մեկի տրամադրած տեղեկությունները, որոնցից շատերն առաջին անգամ են դրվում շրջանառության մեջ: Ներկայացնում ենք գրքի մանրամասների և կարևորության մասին մեր գրույցը հեղինակի հետ:



- Ինչո՞ւ «Պայքարներ թուրքիայում և... ոչ միայն»: Ի՞նչ շեշտադրում ունի գրքի խորագիրը:

- Լավ է, որ այս հարցը վերջապես տրվեց: Շտապեմ ասել, որ վերնագիրն իմ սրտով չէ, ավելի շատ հողվածի վերնագիր է, ոչ թե գրքի, հատկապես, որ գեղարվեստական շարադրանք ունի:


- Գիրքը շարադրել եք գեղարվեստական ոճով. ո՞վ է ձեր հերոսը:

- ASALA-ի առանցքային անդամներից էր Գաղտնի բանակի առաջին կազմում ընդգրկվածներից, ինչը շատ կարևոր է: 1975-ի հունվարի 20-ին, երբ ASALA-ն իր առաջին գործողությամբ հայտարարեց իր մասին՝ ստանձնելով կատարվածի պատասխանատվությունը, այդ ժամանակ, չհաշված մի քանի մտավորականների, մարտիկները 4-6 հոգի էին: ASALA-ն սկսել է ստվարանալ 1980-ից հետո, իսկ մինչ այդ մի քանի հոգի էին, բայց ամենացուրց նվիրյալներ, որոնք կարողացան այնպիսի պարբերականությամբ կազմակերպել գործողությունները և այնքան հաջողված ու անվրեպ, որ շատ արագ հայտնվեցին տարբեր երկրների գաղտնի ծառայությունների ու շարժումների կենտրոնում դառնալով նրանց մտահոգության առարկան: Եվ այդ ընկերը, որը դարձել է գրքի առանցքային հերոսը, այդ մի քանի հնաբնակ մարտիկներից մեկն է: Հենց նրա հետ հանդիպումն էր առիթը, որ միտք հղացա գրել այս գիրքը:

- Ի՞նչ աղբյուրներից եք օգտվել գիրքը շարադրելիս:

- Թող անհամեստ չհնչի, բայց ես նույն-չափ հերոս եմ, որքան իմ գրքի հերոսը, քանի որ նրա պատմածը գրքի բովանդակության մի մասն է, մնացյալը տարիներով հավաքած իմ տեղեկություններն են, որ վերագրել են հերոսին, որպեսզի գիրքը կառուցվածք ունենա, և կազմակերպության մասին պատմությունն ամբողջական դառնա: Մենք ունենք պատմաբաններ Ստեփան Պողոսյանի և Վլադիմիր Պետրոսյանի աշխատությունները, որոնք ուսումնասիրել են միջազգային մամուլը և, հիմնա-

կանում հենվելով դրա վրա, գրել ASALA-ի պատմությունը: Բայց երբ խոսքը գաղտնի կազմակերպության մասին է, բնականաբար, մամուլը հիմնական պատկերացում չի կարող տալ, որովհետև որևէ գաղտնի կազմակերպություն իր ներքին խոհանոցը չի բացի մամուլի առաջ: Այդ երկու աշխատություններից և մամուլից զատ կա մեր ազգային հերոս Մոնթե Մելքոնյանի երկու գիրքը՝ «Պատմություն ASALA-ի», որ 1983-ին գրել է Այնճարում անգլերենով, և լույս է տեսել 1990-ին Լոզանում հայերեն թարգմանությամբ, իսկ հաջորդը՝ «Իրականություն» վերնագրով, կնոջ՝ Սեդայի հետ գրել է այստեղ 1992-ին: Էլի կա մեկ-երկու գիրք, Մոնթեի ընկերներից Վահե Շահնուրայանի գիրքը՝ «Կառնե Նանանյան. էջեր մահատակ հերոսի մասին», նաև Մոնթեի եղբոր՝ Մարգար Մելքոնյանի գիրքը, որ դարձյալ ստորագրել է Սեդայի հետ համատեղ: Բայց դրանք բոլորն էլ կողմնապահ գրքեր են: Սրանք են գրավոր աղբյուրները, որ տարիների ընթացքում փորձել են համադրել, մարսել այդ ամենը: Սակայն շատ ներհակ են դրանք: Իսկ գլխավոր աղբյուրները հենց կազմակերպության անդամներն են բացահայտված և չբացահայտված, որոնց հետ տարիներ շարունակ հաջողվել է շփվել, և իմ հավաքած փաստերը փորձել են ստուգել, թե բանակի ամեն անդամ ինչպես է նայում, ինչպես է վերաբերվում դրանց: Այսինքն՝ կենդանի գործող անձինք՝ ակադեմիկները, մասնակիցները զատ ավելի հավաստի աղբյուր են, բայց դա չի նշանակում, որ նրանց ասածը հավաստիորեն տեղ են ընդունել, դրանք էլ փորձել են ճշտել այլ անդամների, ընկերների միջոցով: Թե ինչ է ստացվել արդյունքում, կասեմ, որ երբեք չեմ հավակնել ինչ-որ վերջնական պատմություն գրել:



- Ո՞րն է գրքի շարադրման հիմնական նպատակը:

- ASALA հասկանալու հայտնի է ոչ միայն հայերիս, այլև միլիոնավոր օտարների: Իսկ մենք, անկախ ունեցած հայացքներից, ծածուկ, թե բացահայտ, հատկապես մեր սերունդը, հպարտանում ենք այդ անունը ասելով: Երբ 80-ականներին լսում էինք գաղտնի բանակ, կարծում էինք՝ դիվիզիա է, բայց իրականում 5-6 հոգանոց նվիրյալների մի խմբակ էր առաջին տարիներին, հետո ընդլայնվեց: Սակայն որքան էլ ընդլայնվել է, իր շուրջ 15-ամյա գործունեության ընթացքում, եթե հաշվենք՝ մոտ 40 մահատակ, երկու տասնյակի չափ քաղաքատարկյալ, նաև չբացահայտված անդամներ, նրանց թիվը հազիվ անցնի 100-150-ից:

Մեծ չի եղել կազմը, այլ հարց է, որ կարողացավ համաշխարհային աղմուկ բարձրացնել՝ աշխարհի ուշադրությունը սևեռելով մեր դատի վրա: Ահա գրքի նպատակը, որ անունը ամեն ոք գիտի, բայց ոչ բոլորը գիտեն, թե ինչ կար այդ անվան տակ: Փորձել են բացել այդ անվան տակ եղածը, երբեք, որ ինչ ղեկավարությամբ ու նվիրվածությամբ են գործել և իրենց անձր գոհաբերել հանում Հայ դատի:

- Գրքի խորագրերից է նաև՝ «ASALA-ն ներսից»: Ի՞նչ տվեց ASALA-ն մեզ, ինչպե՞ս

եք գնահատում նրա դերը պատմության մեջ:

- «ASALA-ն ներսից». ինչո՞ւ են ընտրել այս ենթախորագիրը: Նշածս գրավոր աղբյուրները կարելի է դիտարկել «ASALA-ն դրսից»: Իսկ երբ աղբյուրները ապրող մարդիկ են, որոնք եղել են կազմակերպության անդամներ, որոնք շատ բան էլ չգիտեին՝ միայն իրենց հանձնարարվածը և մեկ-երկու ընկերոջ մասին, հավաքելով դրանք՝ 10 և ավելի աղբյուրներ, այ հենց դա է ASALA-ն ներսից: Մասնակիցների պատմածները, վկայությունները, ասի այս գրքի արժեքը: Հայ գաղտնի բանակը մեզ տվեց հպարտություն, նաև խղճի, զոհի կարգավիճակից դուրս բերեց և աշխարհին ստիպեց լսել Հայ դատի մասին: Իսկ պատմության ընթացքի մեջ հանգուցայինն այն է, որ ASALA-ի հիմնական նպատակը Արևմտյան Հայաստանի ազատագրումն էր: Նաև աշխարհն անտարբեր էր մեր ցավին՝ մինչև ASALA-ի ռուսները պայթեցին, և հարկադրված եղավ ուսումնասիրել, թե ինչ է ուզում այդ կազմակերպությունը: Մենք աղերսելու փոխարեն պահանջեցինք, պարտադրեցինք աշխարհին հաշվի մատել մեր ցավի հետ, սթափ ու զգոն հայացք նետել Հայ դատին, այդ ամենը՝ շնորհիվ ASALA-ի: ■

Հարցազրույցը՝ Գուրգեն ԱՐԱՅԻ



Դերեցիկ ԴԵՄԻՐՃՅԱՆ. ՀԱՅԸ (հատված)

Որքան տարօրինակ, հանելուկային արարած: Որքան խաբուսիկ: Երևույթը, ոչ ինքը: Բայց և ի՞նչ է ինքը, իր նկարագիրը: Չուր աշխատանք. որոնում են իր ինքնությունը, գտնում, բայց և իսկույն տեսնում են, որ դա է նորից երևույթ էր: Անհանգիստ դեմք ունի, չի թողնում նկարես: Իր ցեղային պատկերն էլ տարօրինակ է: Թվով գրեթե ամենափոքրն է, տառապանքով ամենամեծը, ժամանակով ամենահինն է, վիճակով՝ ամենից անփոփոխը: Ամենից աննպաստը իր երկրի դիրքն է, ինքն ամենից համառ կառչեց նրան: Որքան անհույս է թվում իր

պագան, բայց և որքան հուսացող է նա: Ասենք՝ իր կյանքում երկու բան բնավ չտեսավ. մեկ՝ բախտ, մեկ էլ՝ հուսահատություն: Ինչպե՞ս ճանաչես նրան, ինչպե՞ս չափես: Իր չափը չափազանցն է. զարմանալի հավասարակշռություն, որ ծայրահեղության մեջն է:

...Երբ նայում են Հային, ինձ թվում է, թե նրա վիրավորանքը այն արժվի վիրավորանքն է, որին ցած են բերել բարձր լեռներից: Թպտում է, ընկնում քարի, աղբի մեջ, կեղտոտվում, թևերը կտրում: Կերակուր ես մեկնում չի ուզում: Չի սիրում ոչ ստրկություն, ոչ երջանկություն. գերադասում է տառապանք և ազատություն: Մաղձոտ է, մեկուսի, բայց չունի գծով ատելություն, որ բարձր լեռներից անծանոթ զգացում է: Գերի արժվի խոր վիշտն է իր սրտի մեջ: Սա Հայկն է, որին զրկել են իր կյանքի միակ պայմանից՝ ազատությունից:

...«Ոչինչ չեմ ուզում ձեզից, ասում է նա իր նեղիչներին,- ձեզ լինի ձեր լուծը, ձեզ լինի ձեր երջանկությունը, զնացեք, ապրեցեք խաղաղ և երջանիկ: Եթե դուք սիրում եք կյանքը, ես սիրում եմ կյանքից ավելի թանկ բանը՝ Ազատությունը»:





Մարկ Տվեց



Ջբաղվեք այն գործով, որը ձեզ դուր է գալիս: 20 տարի հետո դուք ավելի շատ կզոջաք այն բաների համար, որոնք այդպես էլ չարեցիք, այլ ոչ թե այն բաների համար, որոնք արել եք: Շարժվեք տեղից, թույլ տվեք, որ քամին ուռեցնի ձեր առագաստը, և ճանապարհ ընկեք, գործեք, ստեղծեք, բացահայտեք:

ԱՐՑԱԽԻ ԿԼԻՄԱՆ

Անհրաժեշտ է իրականացնել լիարժեք ուսումնասիրություն

Արցախում կլիմայի և դրա փոփոխության վերաբերյալ ուսումնասիրությունների արդյունքները կարևոր են տնտեսության կայուն զարգացման, քաղաքաշինության, գյուղատնտեսության, բանակաշինության, առողջապահության, տուրիզմի, ջրային ռեսուրսների կառավարման առումով: Եներգետիկայի ոլորտներին տեղեկատվությանը ապահովելու համար անհրաժեշտ է լիարժեք կլիմայական մոնիթորինգ: Այդ ուսումնասիրությունների անհրաժեշտության մասին բարձրաձայնվել է դեռևս 1996 թվականից՝ հիմնականում գիտական կառույցներում, սակայն մինչ այժմ խնդրին լուծում չի տրվել: Իսկ խնդրին լուծում տալու համար ՀՀ ԱԻՆ «Հիդրոմետ» ծառայության մասնագետները

տազոտական կառույցներում, կլիմայի փոփոխությանը պայմանավորված խնդիրների լուծման համար: Ըստ գնահատականների 1951-2015 թթ. ընթացքում ջերմաստիճանը Արցախի ամբողջ տարածքում աճել է 1,05°C, իսկ տեղումները նվազել են 8,3 տոկոսով: Ջերմաստիճանի առավելագույն աճը դիտվել է Ասկերանում՝ 1,46°C, իսկ տեղումները զգալիորեն նվազել են Ջերմաջուրում (Իստիսու) և Թարթառում (Միր Բաշիր)՝ մոտ 13 տոկոսով: Ստորև բերված են 1961-1990 թվականների փաստացի և 2071-2100 թվականներին մոդելային հաշվարկներով ջերմաստիճանի բաշխվածության քարտեզները:



հավաքագրեցին Արցախում ու նրան հարակից տարածքներում բոլոր ժամանակներում կատարված դիտարկումների արդյունքները՝ ըստ 14 օդերևութաբանական կայանների: Այդ դիտարկումների արդյունքները վերցված են 1881-1917 թթ. Ցարական Ռուսաստանի կազմում՝ Արցախում տեղակայված օդերևութաբանական կայանների դիտարկումների պահպանված տվյալները (Թբիլիսիի արխիվ), 1927-1991 թթ. ԽՍՀՄ կազմում եղած ժամանակահատվածի օդերևութաբանական դիտարկումների տվյալները (Ռուսաստան, Օբնինսկ, տվյալների արխիվ) և 1991-2015 թթ. Ստեփանակերտի, Հաղորթի, Մարտակերտի, Մարտունու և Ասկերանի օդերևութաբանական կայաններից վերցված դիտարկումների տվյալները: Նշենք, որ միջազգային չափանիշներին համապատասխան (8-ժամյա դիտարկումներ) իրականացվում է միայն Ստեփանակերտում: Տվյալները համակարգված, մշակված և վերլուծված են համաձայն միջազգային չափորոշիչներով ընդունված մեթոդական ցուցումների և օգտագործվել են հետագա ուսումնասիրություններում: «Հայաստանի կլիմայական տեղեկագրի» անալոգով պատրաստվել է «Արցախի կլիմայական տեղեկագիրը» (շուրջ 100 էջ)՝ օգտագործելով կլիմայական մոնիթորինգի տվյալները, որտեղ ներառված են կլիմայական բոլոր հարաչափերը: Տեղեկագիրը կարիք ունի խմբագրման և տպագրման: Մշակվել է նաև կլիմայի փոփոխության գնահատման, ինչպես նաև կլիմայական սցենարների կանխատեսման համար անհրաժեշտ տվյալների շտեմարան (75 էջ), որում ներառված են 1951-2015 թթ. տարեկան, ամսական, սեզոնային կտրվածքով Արցախում օդի ջերմաստիճանի, մթնոլորտային տեղումների արժեքները: Այդ տվյալները կարող են օգտագործվել Արցախի ուսումնական հաստատություններում, գիտահե-

կլիմայի փոփոխության կանխատեսումների համաձայն օդի միջին ջերմաստիճանը ԼՂՀ-ում 2011-2040 թվականներին կաճի 1,54°C-ով, 2041-2070 թթ. կանխատեսվում է ջերմաստիճանի աճ 3,2°C-ով, իսկ 2071-2100 թթ. կտրվածքով՝ 5,5°C-ով: Քանի որ Արցախի տարածքը կլիմայական մոնիթորինգի տեսանկյունից համարվում է ոչ լուսաբանված տարածք, ուստի «Հիդրոմետ» ծառայությունը կօժանդակի Արցախի մասնագետներին պատրաստել միջազգային կառույցներին ներկայացվելիք հաշվետվություններ Հայաստանի օրինակով: Այդ նպատակով մեր կողմից որպես նմուշ պատրաստվել է կլիմայական տեղեկատվություն Արցախի համար՝ օգտագործելով 1951-2015 թթ. դիտարկումների տվյալները: Համապատասխան միջազգային կառույցներին այդ տեղեկատվության ուղարկման հարցերը կքննարկվեն Արցախի որոշում կայացնող անձանց հետ: Միաժամանակ նախատեսվում է համատեղ գնահատել Արցախի ջրային ռեսուրսները, գետային հոսքերը, գարնանային հորդացումները և ջրային ռեսուրսների խոցելիությունը կլիմայի փոփոխություններից, մշակել գյուղատնտեսական մշակաբույսերի (հացահատիկ, կարտոֆիլ, ծխախոտ, բանջարանոցային, խաղող և այլն) աճման, զարգացման և բերքատվության կանխատեսման մեթոդները՝ ելնելով ագրոկլիմայական պայմաններից, ինչպես նաև տարածաշրջանում բերքի խոցելիությունը կլիմայի հնարավոր փոփոխության ազդեցության հետևանքով, ուսումնասիրել կլիմայի փոփոխության և անապատացման հիմնահարցերն Արցախում: ■

Համլետ ՄԵԼՔՈՆՅԱՆ
«Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ-ի տնօրենի խորհրդակցական

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) հայտարարում է մրցույթ՝ Նախարարության աշխատակազմում քաղաքացիական ծառայության հետևյալ թափուր պաշտոնը զբաղեցնելու մասին

1. Պետական հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչության Կոտայքի մարզային հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչության (այսուհետ՝ Տեսչություն) տեսչական բաժնի (այսուհետ՝ Բաժին) առաջատար մասնագետ-տեսուչ (ժամկազիր՝ 21-3.3-35): Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, ինչպես նաև պաշտոնատար անձանց ու քաղաքացիների կողմից հրդեհային և տեխնիկական անվտանգության նորմատիվ փաստաթղթերի պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման աշխատանքներին: Մասնակցում է բնակավայրերի, շենքերի և շինությունների նախագծման, կառուցման և շահագործման, հիմնանորոգման ու վերակառուցման ժամանակ հրդեհային և տեխնիկական անվտանգության նորմատիվ փաստաթղթերի պահանջների կիրառման մասին եզրակացություններ տալու աշխատանքներին: Մասնակցում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան ստուգումների և հետազոտությունների իրականացման աշխատանքներին՝ կազմակերպություններում, հիմնարկներում, բնակելի շենքերում և առանձնատներում: Մասնակցում է շենքերը և շինությունները շահագործման ընդունող հանձնաժողովների աշխատանքներին: Մասնակցում է բնակավայրերում և օբյեկտներում հրդեհային և տեխնիկական անվտանգության պահպանության կազմակերպմանը վերաբերող հարցերի քննարկմանը: Իրականացնում է պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ: **Մրցույթը կկայանա 19.07.2017 թ., ժամը 10:00-ին, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության շենքում (ք. Երևան, Դավիթբաշեն, 4-րդ թաղամաս, Ա. Միկոյան 109/8):** Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝ . բարձրագույն կրթություն, քաղաքացիական ծառայության պաշտոններում, կամ համայնքային ծառայության պաշտոններում առնվազն մեկ տարվա ստաժ, կամ վերջին հինգ տարվա ընթացքում քաղաքական, կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդակցականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոններ:

րի, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ, կամ առնվազն երկու տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ մինչև 2020 թվականի հունվարի 1-ը պետական կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ, . նշված պաշտոնների անձնագրերի 10-րդ կետի 2) ենթակետում նշված լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում, . համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն, . անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտությունների և ունակությունների, ինչպես նաև նշված պաշտոնների անձնագրերով նախատեսված գործառնություններից բխող կառավարչական հմտությունների և ունակությունների տիրապետում (Ցանկեր N 1-2): Դիմող ՀՀ քաղաքացիները Նախարարություն պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը (բնօրինակների հետ միասին)՝ . գրավոր դիմում (ծեղ լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս), . կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենը (պատճենները), . աշխատանքային գրքույկի պատճենը, . արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր գորակցային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանքը, . մեկ լուսանկար՝ 3 x 4 սմ չափի, . անձնագրի պատճենը: **Փաստաթղթերն ընդունվում են միայն աշխատանքային օրերին՝ ժամը 9:30-ից մինչև 12:30-ը:** Դիմող ՀՀ քաղաքացիները մրցույթի պետք է ներկայանան ՀՀ անձնագրով: **Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 30.06.2017 թ.:** ՀՀ քաղաքացիները ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմում քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար կարող են դիմել Նախարարության աշխատակազմ (ք. Երևան, Դավիթբաշեն, 4-րդ թաղամաս, Ա. Միկոյան 109/8, հեռ. 010 31-78-65):

ԵԶՎԿԻ ՉԵՌՔԵՐՈՒՄ

Հայաստանի Ազգային գրադարանի տնօրեն Տիգրան Ջարգարյանը հայտնել է, որ վերջերս 200 եվրոյով ձեռք են բերել 1535 թվականի քարտեզ, որտեղ Հայաստանը նշված է որպես պետություն, աշխարհագրական անվանում: «Եզակի ձեռքբերում է», - ասել է նա՝ նշելով նաև, որ գրադարանը հիմնականում գնումներ է կատարում մասնավոր գրավաճառներից, նաև կան մարդիկ, ովքեր նվիրում են գրադարանին: Նրա խոսքով՝ գրադարանում ստեղծում են հայ մամուլի, գրքի շտեմարան, թվայնացման մեծ աշխատանք են կատարում: Թվայնացման են հայ մամուլը՝ «Ազդարար»-ից մինչև մեր օրերը, տպագիր գրքերը, ատենախոսությունները, պատատները: Թվայնացվել է արդեն 2,5 մլն-ից ավելի մամուլի էջ: Տիգրան Ջարգարյանը նշել է նաև, որ գրադարանի ընթերցարանը մշտապես մարդաշատ է լինում:





Ինչպես աղբյուր

Մի լողացեք բացասական մտքերի ծովում: Հանք ձեր գլխից բացասական մտքերը, քաշեք դրանց ոտքերից, ձեռքերից, բայց կարողացեք հեռացնել դրանք ձեզանից: Այն, ինչի վրա դուք կենտրոնացած եք, որոշելու է այն, թե ինչպես են ընթանալու ձեր գործերը մոտ ապագայում: Եթե մտածեք միայն ձեր խնդիրների մասին, ապա ամբողջ կյանքը կարելի է դրանց պատճառով տառապելով, մինչդեռ եթե կենտրոնանաք ինչ-որ կարևոր և օգտակար բանի վրա, հենց դրան էլ կհասնեք կյանքում:

Օգնում են փրկարարները

Փրկարարներն ազատել են անձրևի «ողտանդներին»

Անցած յոթ օրում ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության ստորաբաժանումները արտակարգ իրավիճակների վերաբերյալ մոտ 400 ահազանգի են արձագանքել: Շատ դեպքերում փրկարարները դեպքի վայր մեկնելուն զուգահեռ տեղեկությունը փոխանցել են այլ ծառայության. շտապօգնություն, «Վեոլիա-ջուր», էլջանց, գազի վթարային ծառայություն, կանաչապատման, սանամաքման ծառայություն, ոստիկանություն և այլն:



Գրանցվել է մոտ 50 հրդեհ. այրվել են տան գույք, շինությունների փայտյա կառուցատարրեր, շինանյութ, անասնակեր, բուսածածկ տարածքներ, ջերմահարվել են պողատու և դեկորատիվ ծառեր: Փակ դուռ բացելու վերաբերյալ էլ 100 կանչ է ստացվել: Վատառողջ, ծանրաբաշ, սակավաշարժ քաղաքացուն բնակարանից իջեցնելու կամ բնակարանում տեղից տեղ տեղափոխելու կանչեր են սպասարկել Երևանի Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք, Ավան, Աջափնյակ, Էրեբունի վարչական շրջանների և Կոտայքի փրկարարները: Տարբեր վայրերում արգելափակված (դիտահոր, վերելակի հորան, նկուղ, շենքի օդատար-ծխատար, մեքենայի շարժիչի տակ և այլն) մի շարք կենդանիներ են ազատվել: Գետերի ու լճերի ափերին կամ այլ վայրերում ցեխակույտի մեջ արգելափակված 3 մեքենա է հանվել երթևեկելի մաս: 35 օձ է հայտնաբերվել և տեղափոխվել անվտանգ տարածք:

Հունիսի 12-ի երեկոյան Երևանում տեղացած հորդ անձրևից հետո բազմաթիվ ահազանգեր են ստացվել: Փրկարարներն արձագանքել են բոլոր զանգերին և մի դեպքում նկուղային հարկում գտնվող էլեկտրոնիկայի խանութից հեռացրել անձրևաջուրը, այլ դեպքում ջրալցված գետնանցումում արգելափակված մեքենաներն ու ուղևորներին անվտանգ հեռացրել տարածքից և այլն:

Այլ կանչեր. Նոր Նորքի փրկարարներն ահազանգ են ստացել, որ Հովհաննիսյան փողոցի թիվ 22 շենքի տանիքի թիթեղյա ծածկի տակ ազգավ է արգելափակվել: Հրշեջ-փրկարարներն ազատել են ազգավին: Էրեբունու փրկարարներն ահազանգ են ստացել, որ Սարի Թաղի տներից մեկի բակում ուղևոր արգելափակվել է երկաթե կառուցատարրերի մեջ: Հրշեջ-փրկարարները ոգնում դուրս են բերել արգելափակումից: Կոտայքի փրկարարներն ահազանգ են ստացել, որ Մրգաշեն գյուղի սկզբամասում կովը ընկել է Արգնի-Շամիրամ ջրանցքը: Հրշեջ-փրկարարները ջրանցքից դուրս են բերել կենդանուն:

Ինձացիր և օգնիր

ԱՆԱԳԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

Վարակներ. աղիքային

Աղիքային վարակներն են. որովայնային տիֆը, պարատիֆերը, դիզենտերիան, հեպատիտ A-ն, խոլերան, սամոնելոզը, բրուցելոզը և այլն: Վարակումը՝ մարտդակաճանապարհով՝ բերանով: Հարուցիչները դուրս են գալիս հիվանդի (վարակակրի) մարմնից կղանքի հետ: Արտազատված հարուցիչներն անսարք կոյուղու, կեղտոտ ձեռքերի, ճանձների միջոցով կամ այլ ճանապարհներով կարող են ընկնել ջրի, սննդի, շրջակա առարկաների վրա և տարածվել: Աղիքային վարակների ամենատարածված շրջանը ամռան և աշնան ամիսներն են:



Աղիքային վարակների նշաններն են. լուծ, երբեմն արյան, լորձի, թարախի խառնուրդներով, սրտխառնոց, փսխում, ախորժակի բացակայություն, որովայնային ցավեր, մարմնի ջերմաստիճանի փոփոխություն:

Աղիքային վարակները կարող են բերել ջրազրկման, հեղուկի և աղերի մեծ քանակի կորստի: Ջրազրկումը վտանգավոր է, քանի որ ջրի և աղերի կորուստը բերում է արյան խտացման և ազդում է բոլոր համակարգերի, հատկապես՝ սրտանոթային համակարգի գործունեության վրա: Ջրազրկումը բացառելու համար տուժածին՝ վարակվածին մեծ քանակությամբ հեղուկ տվել և ջրազրկման բուժման

համար նախատեսված լուծույթներ (ռեհիդրոն, օրալիտ և այլն) պարտադիր պահպանելով դրանց պատրաստման կանոնները՝ 3-4 թեյի գդալ շաքարը և կես թեյի գդալ աղը լուծեք մեկ լիտր ջրում: Ժամը մեկ տուժածին տվեք առնվազն երկու բաժակ այդ լուծույթից: Տուժածը պետք է լուծույթը խմի կուրս-կուրս՝ մեկ բաժակը 10 րոպեում: Կես լիտրից ավելի սովորական ջուր մի տվեք: Սիտաբազի պարզ արագ արձագանքման ծառայություններ:

ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԿԱՎԱՐՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ
www.cmsa.am

Հասցե. Երևան, Ավան, Աճառյան 1
Հեռ. (060) 69-10-01 (ռեկտոր)
(060) 69-10-03, (060) 69-10-05
(060) 69-10-06, (060) 69-10-13

ԱԿՏԻՎՆԵՐԻՆ ԱՅՑՏԱՐԱՐՈՒՄ Է 2017-2018 ՈՒՍՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

- Ակադեմիան իրականացնում է:**
1. բակալավրի կրթական ծրագիր առկա ու հեռակա ուսուցմամբ,
 2. մագիստրոսի կրթական ծրագիր միայն հեռակա ուսուցմամբ,
 3. միջին մասնագիտական կրթական ծրագիր:
- Ընդունելությունը.**
- > Բակալավրիատում՝
 - Հայոց լեզու (թեյադրություն)
 - > Մագիստրատուրայում՝ հարցազրույց:

Մասնագիտություններ	Վարձը (հազ. դր.) առկա	Վարձը (հազ. դր.) հեռակա
Բակալավրի կրթական ծրագիր		
Հրդեհային պաշտպանություն	Անվճար	240
Փրկարարական գործ	Անվճար	240
Ճգնաժամային կառավարում	320	260
Կառավարում	320	260
Քաղաքացիական պաշտպանություն	300	240
Մեկտանգությունն արտակարգ իրավիճակներում	300	240
Տրանսպորտային և հրշեջ փրկարար հատուկ տեխնիկայի շահագործում և սպասարկում	300	240
Հրդեհային անվտանգություն	300	-
Մագիստրոսի կրթական ծրագիր		
Փրկարարական գործ	-	320
Ճգնաժամային կառավարում	-	320
Կիրառական սեյսմոլոգիա	-	320
Միջին մասնագիտական կրթական ծրագիր		
Հրդեհային պաշտպանություն	150 90*	-
Հրշեջ-փրկարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկում և նորոգում	150 90*	-
Կառավարում արտակարգ իրավիճակներում	150 90*	-

Մանրություն.
*Նշված վճարով ուսուցումն իրականացվում է Ստեփանավան քաղաքում:

Միջին մասնագիտական կրթական ծրագրով գերազանց և լավ գնահատականներով շրջանավարտները կարող են առանց ընդունելության քննությունների ուսումը շարունակել ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի բակալավրի կրթական ծրագրով 2-րդ կուրսում:

ԱՆՎՃԱՐ ՏԵՐԵՐ

Կառավարության 2017 թվականի ապրիլի 20-ի N 434-Ն որոշմամբ ՀՀ ԱԻՆ ճգնաժամային կառավարման պետական ակադեմիային հատկացվել է 60 անվճար տեղ առկա ուսուցմամբ «Հրդեհային պաշտպանություն» և «Փրկարարական գործ» մասնագիտությունների գծով, որից 5-ը տրամադրվել է Արցախի Հանրապետությանը:

Հայաստան-ՆԱՏՕ ծրագրեր՝ ԵՎՊԱ-ում



ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար Դավիթ Տոնոյանը և Կովկասում ու Կենտրոնական Ասիայում ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ Ջեյմս Ապաթուրայը քննարկել են համատեղ կրթական ծրագրեր իրականացնելու հնարավորությունը: Մտադրություն կա քաղաքացիական պատրաստվածության մակարդակի բարձրացման նպատակով ԱԻՆ ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայում կազմակերպել աղետների արձագանքման ուժերի մասնագիտական գիտելիքների, հմտությունների ու կարողությունների բարելավման, փորձի փոխանակման, վերապատրաստման դաշընթացներ: